# ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

Ք.Գավառ 15.01.2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ս. Մանուկյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Հ. Ղափանցյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա , այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024թ.դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրվող բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին,, հոդվածով 66412,0 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնում է Կատարողին:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է ,,Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնին թատերական ներկայացումների հետ կապված ծախսերի իրականացման նպատակով, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

## 2. Հաշվետվությունը

2.1. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

## 3. Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը:

## 4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-մաժոր/

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## 5. Այլ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ | Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն |
| Ք. Գավառ | ՀԿՀՀ 08401889 |
| ՀԿՀՀ 08428824 | |
| ՀՀ 900171078521 | Գանձապետական հ/հ 900178000098 |
| ՀՀ ՖՀ Գործառնական վարչություն | |
| Գլխավոր քարտուղար | Տնօրենի պաշտոնակատար՝ |
| Ս.Մանուկյան | Ն.Չարվադարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Դրամատիկական թատրոնին 2025թ. տրամադրվելիք

գումարներն ըստ ամսական բացվածքի

Թատերական ներկայացումների հետ կապված ծախսեր

| N | Ամիսը | Գումարը( հազար դրամ )՝աճողական |
|---|---|---|
| 1 | Հունվար | - |
| 2 | Փետրվար | 8854,9 |
| 3 | Մարտ | 13282,4 |
| 4 | Ապրիլ | 19923,6 |
| 5 | Մայիս | 26564,8 |
| 6 | Հունիս | 33206,0 |
| 7 | Հուլիս | 37633,5 |
| 8 | Օգոստոս | 42060,9 |
| 9 | Սեպտեմբեր | 46488,4 |
| 10 | Հոկտեմբեր | 53129,6 |
| 11 | Նոյեմբեր | 59770,8 |
| 12 | Դեկտեմբեր | 66412,0 |

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՀՀ ՖՆ Գործառ.վարչություն

ՀՎՀՀ 08428824 ՀՀ 900171078521

Գլխավոր բարտուղար՝

Ս.Մանուկյան

Կ ա տ ա ր ո ղ

Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի

անվան դրամատիկական թատրոն

ՀՎՀՀ 08401889

Գանձապետական հ/հ 900178000098

Տնօրենի պաշտոնակատար՝

Ն.Պարվանդարյան